3406

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան
«28» 03 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 036 - 24

Ձեռնարկողը՝ ***«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ***
Սյունիքի մարզ, Քաջարան, Լեռնագործների փող., 18 շենք

Գործունեությունը՝ ***«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի վտանգավոր թափոնների գործածության (մշակում, վերամշակում, պահում և տեղադրում) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 036 - 24

«28» Նոյեմբեր **2024թ.**

Սյունիքի մարզի Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի վտանգավոր թափոնների գործածության (մշակում, վերամշակում, պահում և տեղադրում) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ
Ներկայացված նյութեր՝	«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Սյունիքի մարզ, Քաջարան և Կապան համայնքներ

Ներածական մաս. «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն նախատեսում է թափոնների կառավարման նպատակով կազմակերպել կոմբինատի գործունեությունից առաջացող արտադրական և սպառման թափոնների պահման և տեղադրման տեղամասեր:

Նախատեսվող գործունեությունը, հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 6)-րդ կետի ա. ենթակետի:

Գործունեությունն իրականացվելու է Կոմբինատի տարածքում, որը գտնվում է Քաջարան համայնքի վարչական սահմաններում: «ԶՊՄԿ» ՓԲԸ-ն բաց եղանակով շահագործում է Քաջարանի պղնձմոլիբդենային հանքավայրը: Գործող բացահանքը գտնվում է Քաջարան քաղաքից 1.7-2.7 կմ հեռավորության վրա՝ Ողջի գետի աջակողմյան հատվածում: Հարստացուցիչ ֆաբրիկան գտնվում է Ողջի գետի ձախակողմյան հատվածում՝ քաղաքի բնակելի հատվածից 300մ հեռավորության վրա: Գործող Արծվանիկ պոչամբարը գտնվում է Արծվանիկ գետի կիրճում՝ հարստացուցիչ ֆաբրիկայից 34.5կմ հեռավորության վրա:

Նկարագրական մաս. «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի գործունեության ընթացքում առաջանում են արտադրության և սպառման 33 տեսակի թափոններ, որոնցից 21-ն օժտված են վտանգավոր հատկություններով (հանդիսանում են վտանգավորության 2-ից 4-րդ դասերի թափոններ), 12-ը անվտանգ (հանդիսանում են 5-րդ դասի թափոններ 2):

Այդ թափոնների պահման/տեղադրման համար կոմբինատում նախատեսվում են հետևյալ տեղամասերը/պահեստները՝

- թափոնների տեղադրման հիմնական պահեստը,
- օգտագործված յուղերի պահեստը (Կապանի բազայի տարածք),
- կապարե կուտակիչների պահեստը (Կապանի բազայի տարածք),
- մետաղի ջարդոնի պահեստը (Կապանի բազայի տարածք),
- սև մետաղի ջարդոնի հրապարակը,
- օգտագործված անվադողերի պահման հրապարակը,
- շինարական աղբի պահման հրապարակը:

Կոմբինատում առաջացող արտադրության և սպառման թափոնների տեսակների մեծամասնությունը պահվում/տեղադրվում է թափոնների տեղադրման հիմնական պահեստում և զբաղեցնում է 264մ^2 տարածք: Հիմնական պահեստի կազմակերպման համար օգտագործվել է կոմբինատի նախկինից չգործող պահեստային շինություններից մեկը, որում ԶՊՄԿ-ի կողմից կատարվել են վերակառուցման և հարդարման աշխատանքներ՝ թափոնների անվտանգ պահումը/տեղադրումն իրականացնելու համար:

Թափոնների կուտակման հիմնական պահեստում բոլոր տիպի նշանակության սենյակների հատակները բետոնացված են B20 դասի բետոնով և ամրանավորված են 200մմ × 200մմ × 6մմ ամրանային ցանցով:

Թափոնների պահման տարածքները իրարից բաժանված են միջնապատերով H=2.40մ: Պատերը շարված են սնամեջ բետոնյա բլոկներից 400մմ × 200մմ × 200մմ ամրանավորումով: Սնամեջ բետոնյա բլոկների խոռոչները լցված են շաղախով: Կառույցը դրսից հարդարված է մետաղական թիթեղներով: Հիմնական պահեստը հագեցած է նաև սանհանգույցով, սնվելու և հանգստի սենյակներով, վթարային արտահոսքի հեռացման համակարգով, որը բաղկացած է հեռացնող առվակների ցանցից և վթարային ավազանից: Վթարային ավազանում կուտակվող վթարային արտահոսքերը կոմբինատի հատուկ տեխնիկայով պարբերաբար հեռացվելու է պոչամբար:

Թափոնների տեղադրման հիմնական պահեստում իրականացվում է ներքին լուսավորության և վարդակային ցանցի էլեկտրամատակարարում:

Օդափոխության համար տեղադրված են 2 հատ 100մմ տրամագծով արտածման օդափոխիչներ և 4 հատ օդափոխության ցանց:

Հակահրդեհային միջոցառումները նախատեսվում է իրականացնել պահեստային տարածքին մոտ տեղադրված հակահրդեհային հիդրանտների և հրդեհաշիջման առաջնային միջոցների՝ կրակմարիչների միջոցով:

Օգտագործված յուղերի պահեստ Օգտագործված յուղերի պահեստը գտնվում է ԶՊՄԿ-ի Կապանի բազայի տարածքում և զբաղեցնում է մոտ 90մ^2 տարածք (10մ × 9մ × 2.8մ):

Օգտագործված յուղերի պահեստը՝ մետաղական կառույց է, հատակը՝ բետոնապատ (B20 մակնիշի լավարկված բետոն), պատված յուղակայուն ծածկույթով: Պահեստն ապահովված է

բնական և արհեստական օդափոխության համակարգով: Պահեստում բանեցված յուղերը պահվում են 1000լ տարողությամբ պլաստիկ, մետաղական ցանցով տարաների մեջ: Արտահոսքերը կանխելու նպատակով յուղերի տարաները տեղադրվում են դրանց տարողունակությանն առնվազն 10%-ով գերազանցող ծավալով հատուկ տակդիրների վրա:

Պահեստը կահավորված է անհատական պաշտպանության միջոցներով (կիսաճտքավոր ռետինե կոշիկներ, ռետինե ձեռնոցներ, ռետինե գոգնոց, պաշտպանիչ ակնոցներ) և յուղի արտահոսքը լոկալիզացնելու ու հավաքելու հանդերձանքով: Վերջինիս ապահովման նպատակով, պահեստում տեղադրված են յուղի հավաքման համար նախատեսված հավաքածուներ՝ SK-120, SK-240 կամ Spilkleen Absorbent Granules 20LTS SK-03-004 տեսակի բնական արդյունաբերական սորբենտներ:

Կապարե կուտակիչների պահեստ Բանեցված կապարե կուտակիչները պահվում են կապարե կուտակիչների պահեստում, որը գտնվում է կոմբինատի Կապանի բազայի տարածքում: Պահեստն իրենից ներկայացնում է 3մ×5մ×2.5մ չափերով երկաթ-բետոնե կառույց:

Մետաղի ջարդոնի պահեստ Կապանի բազայի տարածքում գտնվող մետաղի ջարդոնի պահեստը բաղկացած է փակ շինությունից և 1000մ^2 մակերեսով բաց ասֆալտապատ հարթակից: Այստեղ պահվում են հետևյալ մետաղական թափոնները՝

-կտորների տեսքով չաղտոտված լեգիրված պողպատե ջարդոնը (351203020199 5),

-չաղտոտված պողպատե մետաղամնացուկը (351201180199 5),

-չտեսակավորված պղնձի ջարդոնը (353103010101 3),

Սև մետաղի ջարդոնի տեղադրման հրապարակ: Կոմբինատի գործունեությունից առաջացող սև մետաղի ջարդոնը հավաքվում է մետաղի ջարդոնի համար նախատեսված հրապարակներում: Կառուցվածքային ստորաբաժանումներում առաջացած սև մետաղի ջարդոնը կշռվում և տեղափոխվում է պահեստավորման հրապարակ: Այստեղ է պահվում նաև եռակցման խարամը: Պահեստն ունի մեկ մուտք և մեկ ելք, ևս մեկ մուտք և ելք էլ նախատեսված է արտակարգ իրավիճակների համար:

Կապանի բազայում գտնվող հրապարակը բացօդյա, ասֆալտբետոնե հատակով տարածք է և զբաղեցնում է 0.18հա մակերես: Հրապարակում մետաղի ջարդոնը (հարստացուցիչ ֆաբրիկայի աղացների օգտագործված գնդերը) պահվում է մետաղական տարաների մեջ: Ընդհանուր տարածքը գիշերային ժամերին լուսավորվում է, կա նաև պահակակետ: Վերոնշյալ երկու հրապարակներում պահվելու են հետևյալ տեսակի թափոնները՝

-չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ (այդ թվում թուջի և/ կամ պողպատի փոշի) (351311000100 4),

- չաղտոտված պողպատե խարտուք (351201150899 5),

- եռակցման խարամ (314048000199 4):

Օգտագործված անվադողերի պահման հրապարակ Օգտագործված անվադողերի պահման հրապարակը գտնվում է բացահանքի արևելյան հատվածում և զբաղեցնում է 1.6հա տարածք: Այն իրենից ներկայացնում է բացօթյա տարածք՝ չամրացված բնական գրունտի հիմքով (բնական հիմնատակ): Հրապարակը, որտեղ պահվում են թափոնները, տեղակայված է համայնքի բնակելի հատվածից հեռու և ունի շրջակայքի լուսավորության համակարգ: Անվադողերը, ներկայումս, տեղադրված են կույտով, սակայն պլանավորվում է դրանք տեսակավորել ըստ չափերի և դասավորել շարքերով: Օգտագործված անվադողերի պահման

հրապարակում պահվելու/տեղադրվելու են նաև կոմբինատի գործունեությունից առաջացած այլ ռետինե հիմքով թափոններ: Հրապարակն ունի երկուական մուտք և ելք, որոնք ապահովում են մեքենաների անխափան տեղաշարժը: Նշված հրապարակում տեղադրվելու են հետևյալ տեսակի թափոնները՝

-բանեցված օդաճնշիչ դողեր (575002001300 4),

-իրենց սպառողական հատկությունները կորցրած չաղտոտված ռետինե իրեր (575001011300 5):

Շինարարական աղբի պահման հրապարակ: Կոմբինատում շինարարամոնտաժային աշխատանքների ընթացքում առաջացած շինարակական աղբը, որը հիմնականում բաղկացած է քարի և բետոնի բեկորներից, փայտից, ավազի և ապակու մնացորդներից, պահվում է մոտ 2հա մակերես զբաղեցնող, գրունտային հատակով շինարական աղբի պահման հրապարակում, որն ունի 2 մուտք և 2 ելք, որոնք ապահովում են մեքենաների անխափան տեղաշարժը: Նշված հրապարակում տեղադրվելու են «Շինարարության, շենքերի և սարքավորումների քանդման խառը թափոններ (399013000100 5)» տեսակի թափոնը: Շինաղբը պայմանագրային հիմունքներով հանձնվում է «Կապանի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ին:

Այլ թափոններ Կոմբինատի արտադրական գործունեության ընթացքում առաջանում են ժայռային մակաբացման ապարներ (340001100199 5) և հարստացուցիչ ֆաբրիկաների շլամներ և պոչանքներ (340101100401 4): Դրանց համար արդյունահանման նախագծով նախատեսված են համապատասխան տեղադրման վայրեր՝ լցակույտարաններ և պոչամբար.

Բացահանքի շահագործման արդյունքում առաջացած մակաբացման ապարները բեռնվում են տարբեր բեռնատարողության ավտոինքնաթափերի մեջ՝ էքսկավատորների և բարձիչների միջոցով և տեղափոխվում լցակույտեր, որոնք ձևավորվում են բուլդոզերների միջոցով: Մակաբացման ապարները տեղադրվում են Ձորատեղի (Դարազամի), Սպիտակ ջուր-1 և Սպիտակ ջուր-2 լցակույտերում:

ՀՊՄԿ-ում առաջացող արտադրության և սպառման թափոնների մի մասի (4 տեսակի թափոններ) համար նախատեսված չեն կենտրոնացված առանձին պահման/տեղադրման տեղամասեր: Այդ թափոնները կուտակվում են համապատասխան տարողությունների մեջ այն ստորաբաժանումներում, որոնցում դրանք առաջանում են և բավականին կարճ ժամանակահատվածում օգտագործվում են տեխնոլոգիական գործընթացում կամ տեղադրվում են աղբավայրերում, ենթարկվում են օգտահանման, վերամշակման և այլն:

Այլ լաբորատոր թափոններ և քիմիական նյութերի մնացորդներ (593019000101 4): Այս թափոնատեսակները ներառում են՝

-լաբորատոր աղտոտված սպասքեր, քիմիական նյութերով աղտոտված տարաներ, երբեմն նաև ժամկետանց, խոտանված կամ ոչ պիտանի քիմական նյութեր: Այս նյութերը տեղափոխվում են հիմնական պահեստ և պայմանագրային հիմունքներով հանձնվում ոչնչացման:

-Լաբորատոր նմուշների մնացորդները, տիգել-կապելները, որոնք կուտակվում են լաբորատորիայում, ապա մանրացվում-խառնվում են հարստացուցիչ ֆաբրիկա մտնող հանքաքարին, քանի որ ըստ էության ունեն նույն բաղադրությունը:

Ձուլման արտադրության լեռնավազ (314001000800 4): Ձուլման լեռնաավազը հավաքվում է մեխանիկական արտադրամասի ձուլման տեղամասի տարածքում, ձուլման տեխնոլոգիայում

պարբերաբար օգտագործվում է որպես լցանյութ: Շարքից դուրս եկած լեռնավազի վերջնական իրացումը կատարվում է հենց կուտակման վայրից՝ «Կապանի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի կողմից՝ համաձայն գործող պայմանագրի:

Կաթսայաջրերի մաքրման շլամներ (941005000401 4): Առաջացած շլամները հատուկ մեքենաների միջոցով՝ մասնագիտացված կազմակերպության կողմից կամ սեփական տեխնիկայով տեղափոխվում են աղբավայր:

Կտորների տեսքով ասբեստի թափոնները (314037020101 4): Կտորների տեսքով ասբեստի թափոնները պահվում են կոնտեյների մեջ՝ թափոնների հիմնական պահեստի հարակից հրապարակում:

Օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված ալյումինե հաղորդալար (353101050199 5): Այս տեսակի թափոնները տեղափոխվում են մեխանիկական արտադրամաս՝ վերաօգտագործման:

Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված կենցաղային աղբը, բացառությամբ խոշոր եզրաչափերի (912004000100 4) հավաքվում է մետաղյա ստանդարտ տարաների մեջ, որոնք հարմարեցված են աղբահանման մեքենաների աշխատանքին: Բոլոր արտադրամասերը, տեղամասերը և վարչական շինություններն ապահովված են անհրաժեշտ քանակությամբ աղբամաններով, որոնք տեղադրված են բետոնապատ հարթակների վրա: Թափոնների հավաքումը և տեղափոխումն իրականացվում է «Քաջարան համայնքի կոմունալ տնտեսություն» ՓԲԸ-ի և «Կապանի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի կողմից՝ համաձայն պայմանագրի: Աղտոտված տեքստիլի այլ թափոնները (582009000101 4) կենցաղային աղբի հետ միասին հեռացվում են «Քաջարան համայնքի կոմունալ տնտեսություն» ՓԲԸ-ի և «Կապանի կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի կողմից և տեղադրվում են համայնքային աղբավայրում:

Թափոնների փոխադրման համակարգը Կոմբինատում իրականացվում է թափոնների ներքին և արտաքին փոխադրում: Ներքին փոխադրումն կատարվում է ԶՊՄԿ-ին պատկանող փոխադրամիջոցներով:

Կոշտ կենցաղային թափոնների հավաքումը և տեղափոխումն իրականացվում է «Քաջարան համայնքի կոմունալ տնտեսություն» ՓԲԸ-ի կողմից՝ համաձայն ԶՊՄԿ-ի և կոմունալ տնտեսության միջև կնքված պայմանագրի:

ԶՊՄԿ-ի արտադրության և սպառման թափոնների կուտակման, նախնական և ժամանակավոր պահեստավորման համակարգը:

№	Թափոնների անվանումը	Թափոնների ծածկագիրը	Տարեկան միջինացված քանակները, տոննա
1	Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան	921101001301 2	7.8
2	Բանեցված շարժիչների յուղերի թափոններ	541002010203 3	1.3
3	Բանեցված դիզելային յուղեր	541002030203 3	86.7
4	Բանեցված արդյունաբերական յուղեր	541002050203 3	44.4
5	Հալոգեններ չպարունակող բանեցված հիդրավլիկ յուղեր	541002130203 3	46.1

6	Չտիչ գործվածքներ և պարկեր վնասակար (անօրգանական) աղտոտվածությամբ	582002000101 3	109.1
7	Չտեսակավորված պղնձի ջարդոն	353103010101 3	1.3
8	Յուղերով աղտոտված ավազ /յուղի պարունակությունը - 15%-ից պակաս/	314023030103 4	0.5
9	Այլ լաբորատոր թափոններ և քիմիական նյութերի մնացորդներ	593019000101 4	2.0
10	Ձուլման արտադրության լեռնավազ	314001000800 4	63.1
11	Եռակցման խարամ	314048000199 4	2.2
12	Բանեցված օդաճնշիչ դողեր	575002001300 4	330.0
13	Չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ (այդ թվում թուջի և/կամ պողպատի փոշի)	351311000100 4	755.0
14	Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	912004000100 4	165.0
15	Աղտոտված տեքստիլի այլ թափոններ	582009000101 4	1.0
16	Յուղերով ներծծված փայտաթեփ	172110200803 4	0.5
17	Յուղոտված լաթեր	582006000101 4	0.3
18	Կաթսայաջրերի մաքրման շլամներ	941005000401 4	8.0
19	Կտորների տեսքով ասբեստի թափոններ	314037020101 4	10.0
20	Չտեսակավորված ներծծված և պատված փայտանյութի թափոններ	171220000101 4	2.0
21	Մաքուր բնական փայտանյութից փայտե թափոններ	171120000100 5	17.0
22	Մաքուր բնական փայտաթեփ	171106010100 5	3.5
23	Շինարարության, շենքերի և սարքավորումների քանդման խառը թափոններ	399013000100 5	450.2
24	Չաղտոտված պողպատե խարտուք	351201150899 5	1882.0
25	Կտորների տեսքով չաղտոտված լեգիրված պողպատե ջարդոն	351203020199 5	
26	Չաղտոտված պողպատե մետաղամնացուկ	351201180199 5	
27	Սպառողական հատկությունները կորցրած չաղտոտված պլաստմասե տարա	571018001300 5	0.15
28	Իրենց սպառողական հատկությունները կորցրած չաղտոտված ռետինե իրեր	575001011300 5	41.0
29	Օգտագործման համար ոչ պիտանի ալյումինե հաղորդալարեր	353101050199 5	0.2
30	Չաղտոտված ստվարաթղթե փաթեթավորման թափոններ	187102020100 5	1.3
31	Գրասենյակային գործունեությունից և գործավարությունից առաջացած թղթե և ստվարաթղթե թափոններ	187103000100 5	3.7
32	*Ժայռային մակաբացման ապարներ	340001100199 5	
33	*Հարստացուցիչ ֆաբրիկաների շլամներ և պոչանքներ	340101100401 4	
	Ընդամենը		**4035.35**

Հաշվի առնելով, որ թափոնների պահման պահեստները/հրապարակները գտնվում են մարդածին երկարամյա ազդեցության գոտում, էական ազդեցություններ կենդանական և բուսական տեսակների վրա նախատեսվող գործունեության արդյունքում չի սպասվում:

Ըստ հաշվետվությունում եղած տեղեկատվության՝ բնության և պատմամշակութային հուշարձաններ նախատեսվող գործունեության տարածքում չկան:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- բանեցված յուղերի տարողությունների վթարումից առաջացած արտահոսքերի արդյունքում հողերի աղտոտումը բացառելու նպատակով բանեցված յուղերի տարողությունները նախատեսվում է պահել տակդիրների վրա:

Տակառների մեջ յուղերի լցման և դատարկման աշխատանքներն իրականացնելու ժամանակ նախատեսվում է օգտագործել հատուկ շարժական տակդիրներ, որոնք թույլ են տալիս անվնաս և ապահով տեղափոխել յուղը՝ բացառելով յուղի արտահոսքերը:

Բանեցված յուղերի պահման պահեստը հագեցած է յուղի արտահոսքը լոկալիզացնելու ու հավաքելու պարագաներով: Վերջինիս ապահովման նպատակով, տեղամասերում առկա են յուղերի հավաքման համար նախատեսված հավաքածուներ:

Նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները:

- Ջրի մոնիթորինգ: Իրականացվելու է առնվազն երկու կետից՝ պահեստավորման վայրերից առաջ և հետո, հաճախականությունը՝ սկզբնական շրջանում ամիսը մեկ անգամ, հետագայում՝ ելնելով մոնիթորինգի արդյունքներից:
- Օդի որակի մոնիթորինգ: Իրականացվելու փակ տարածքների ներսում՝ անվտանգության նկատառումով և շենքից դուրս՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը գնահատելու նպատակով:
- Հողի մոնիթորինգը նախատեսվում է իրականացնել թափոնների պահման բաց հրապարակներում և արտահոսքերի դեպքում:

Փորձաքննական պահանջներ.

- Անհրաժեշտ է օգտագործված անվադողերի պահեստավորումը իրականացնել ըստ չափերի և տեղադրել շարքերով:
-Տարածքից թափոններն անհրաժեշտ է անմիջապես տեղափոխել, եթե խախտվել են թափոնների կուտակման միաժամանակյա սահմանաքանակները (լիմիտները), կամ առկա է մարդու կենսագործունեության միջավայրում (մթնոլորտային օդ, հող, գրունտային ջրեր) հիգիենիկ նորմատիվների գերազանցում:
-Վտանգավոր թափոնների գործածության փոխադրումը ՀՊՄԿ տարածքից դուրս իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, լիցենզավորված ընկերությունների կողմից՝ այդ նպատակի համար սարքավորված հատուկ ավտոմեքենաներով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի վտանգավոր թափոնների գործածության (մշակում, վերամշակում, պահում և տեղադրում) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է փորձաքննական դրական եզրակացություն՝ վեր նշված փորձաքննական պահանջների կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
Փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան